զկամարսն և զգմբեթն առանց քակելոյ զսննեակսն զայնոսիկ ։ Իսկ այլազգիքն՝ որք բնակէին անդ , ոչ տային նոցա թոյլ մերձենալ անդ ։ Ի դժուարիլ գործոյն , փոխանորդն Լատինաց խոստացաւ առաջի բազմութեան այլազգեաց , քակել զսննեակսն , և զկնի շինութեան գմբեթին՝ վերըստին շինել զայնս իւրովք ծախիւք ըստ առաջին կարգի ։ Յանձն առին զայս պայման այլազգիքն , և ետուն չափել Ճարտարապետին զամենայն սննեակսն իւրաքանչիւր սպարագայիւք , և ապա քակեալ զայնս , յետ շինութեան գըմբեթին , վերստին շինեցին զնոսա , որոց 2 պատուհանքն հայէին 'ի տաճար անդր Ս · Յարութեան , որ և փակեալ խափանեցան յետոյ ։

Զկնի աւարտման նորոգութեանց և շինութեանց եկին Բդեշխն և Դատաւորն բազմութեամբ այլազգեաց 'ի տաճար անդր , ընդ որս էին Ոստիկանք Դրանն և Ճարտարապետք , եւ չրջեալ յամենայն տեղիս արարին մանրամասն քննութիւն 'ի բաժնի իւրաքանչիւր ազգաց եւ զարդիւնս քննութեան հարեալ 'ի գիր՝ առաքեցին 'ի Դուռն , որպէս պատուիրեալ էր նոցա յառաջագոյն ։ Այլ իբրեւ կամեցան ծեփել և սպիտակացուցանել զնորոգեալ տեղիսն , ոչ ետուն թոյլ Բդեշխն և որք ընդ նմա , զի յառաջագոյն հրովարտակաւ արգելեալ էր զայն Արքայի ։ Ապա միաբանեալ Փոխանորդաց երից ազգաց՝ բազում թախանձանօք ածին 'ի հաւանութիւն զմիտս Դատաւորաց , ցուցանելով նոցա ըղհնացեալ ծեփս և զզանազան պատկերս եւ նկարս , որք զարդարէին զորմս , այլ 'ի թանձրամած ծխոյ սեւացեալ եւ խանդարեալ էին ։ Զի 'ի ժամանակին յորում տիրեաց Սալահատտին քաղաքին Երուսաղէմի եւ 'ի բաց վարեաց անտի զԽաչակիրս , կարգեալ էր զՍ · Յարութիւն լինել խոհանոց զօրաց իւրոց , զաղխս և զկարասիս պատերազմին լցեալ էր անդ , յորոց եղծեալ և ապականեալ էին բազում տեղիք · զայս ամենայն մանրախոյզ քննութեամբ ստուգեալ Դատաւորաց՝ ծանուցին 'ի Դուռն , ընդ նմին և զթախանձանս քրիստոնէից · զի եթէ ոչ էր ծեփեալ նորոգեալ տեղիքն , ընդունայն լինէին ամենայն ծախք եւ աշխատութիւնք ։ Ի հասանել այսմ թղթոց 'ի Դուռն՝ ետ հրաման Արքայն միայն ծեփել և սպիտակացուցանել առանց պատ-